ՆՈՐԱՅԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Յովհաննէս Թումանեանը (1869-1923) գրական գործունէութեանը զուգահեռ զբաղուել է նաեւ հանրօգուտ հասարակական գործունէութեամբ: Այս առումով առանձնանում է յատկապէս Առաջին համաշխարհային պատերազմի եւ յաջորդող տարիներին Յ. Թումանեանի իրականացրած բուռն գործունէութիւնը, որի առանցքում Հայոց ցեղասպանութեան յետեւանքով թուրքական եաթաղանից մազապուրծ եղած եւ Անդրկովկասում հաստատուած հարիւրհազարաւոր հայ գաղթականների բազմաթիւ կարիքները դարմանելն էր:

Ստորեւ առաջին անգամ հրապարակուող փաստաթղթերը ժամանակագրական տեսակէտից ընդգրկում են 1918-1923 թթ.: Առաջին 12 վաւերագրերը վերաբերում են Յ. Թումանեանի գործունէութեան տարբեր դրուագներին, իսկ վերջին 2 փաստաթղթերը բանաստեղծի որդու նամակներն են հօր մահուանն առնչուող հանգամանքների վերաբերեալ:

Հրապարակուող 1 փաստաթուղթում խօսւում է Հայոց ազգային խորհրդի՝ Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի եւ Բորչալուի ընդհանուր լիազօրի պաշտօնից բանաստեղծի հրաժարուելու մասին: Թ. 2-8 փաստաթղթերը Թիֆլիսում տեղակայուած Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհրդի նախագահ Յ. Թումանեանի 1918թ. սեպտեմբերի 4-ի, 13-ի, հոկտեմբերի 2-ի, 11-ի, նոյեմբերի 1-ի, 3-ի, 1919թ. մարտի 24-ի գրութիւններն են Վրաստանի Հայոց ազգային խորհրդին: Այդտեղ խօսւում է հայ գաղթականութեան հարցի վերաբերեալ խորհրդակցութիւն հրաւիրելու, Ազգային խորհրդի աշխատանքներին հայրենակցական միութիւնների ներկայացուցիչների մասնակցութեան, Համաշխարհային պատերազմին յաջորդող հաշտութեան համագումարին հայութեան կողմից յուշագիր կազմելու, Ղազախի հայ ազգաբնակչութեան եւ գաւառում ապաստանած գաղթականութեան տնտեսական ծանր կացութեան մասին: Փաստաթղթերը շարադրուած են Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհրդի բլանկի վրայ, իսկ վերջում դրուած է նոյն խորհրդի կնիքը: Թ. 9 վաւերագիրը Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ յանձնաժողովի նախագահ Յ. Թումանեանի 1919 թ. յունիսի 28-ի գրութիւնն է Վրաստանում ՀՀ դիւանագիտական առաքելութեանը, որում խօսւում է ՀՀ կառավարութիւնից յանձնաժողովի ունեցած դրամական ակնկալիքների մասին: Թ. 10 11 փաստաթղթերից առաջինը Արտգործժողկոմատի 1921թ. ապրիլի 16-ի գրութիւնն է ՀՍԽՀ անցագրերի բիւրոյին՝ Երեւանում գտնուող Յ. Թումանեանին Թիֆլիս մեկնելու անցագիր տրամադրելու մասին: Միւս վաւերագիրը Արտգործժողկոմատի 1921թ. ապրիլի 18-ով թուագրուող համապատասխան անցագիրն է: Փաստաթղթերի ընթերցումից բացայայտւում է ժողովրդի առօրեայ հոգսերով եւ ուրախութիւններով ապրող մեծ անհատը:

Թ. 12 եւ 13 փաստաթղթերը մեծ բանաստեղծի՝ Եւրոպայում ուսանող որդու՝ Համլիկ Թումանեանի 1923 թ. մարտի 28-ի եւ 29-ի գրութիւններն են Ասքանազ Մռաւեանին եւ Բեռլինում Անդրկովկասեան Դաշնութեան ներկայացուցչին: Փաստաթղթերում խօսւում է 1923 թ. մարտի 23-ին Յ. Թումանեանի մահուան, նրա թողած անտիպ գրական ժառանգութեան պահպանման մասին: Բանաստեղծի որդին պատրաստակամութիւն էր յայտնում

ուսումն աւարտելուց յետոյ վերադառնալ Հայաստան՝ ստացած գիտելիքները հայրենիքին ծառայեցնելու նպատակով:

Հրատարակուող փաստաթղթերն ընտրուած են Հայաստանի ազգային արխիւի (ՀԱԱ) թիվ 37, 114, 122, 222, 245, 275, 441 ֆոնդերից: Պահպանել ենք վաւերագրերի լեզուառճական առանձնայատկութիւնները, վաւերագրերի վերնագրերը (բացի թ. 1, 11 փաստաթղթերից), ուղղագրութիւնը (բացառութեամբ թ. 1 փաստաթղթի, որ թարգմանութիւն է ռուսերէնից) Հրապարակուող փաստաթղթերում առկայ ընդգծումները նոյնպէս բնագրերինն են: Ընթերցողների համար աւելի դիւրընկալելի դարձնելու նպատակով կատարուել են որոշ ծանօթագրութիւններ: Տեքստերի կրճատ բառերը լրացուած են ուղղանկիւն փակագծերում ([]), պակասող բառերն ու արտայայտութիւնները բերուած են սուրանկիւն փակագծերում (<>), իսկ հրապարակումներից բաց թողնուած հատուածները ցոյց են տրուում սուրանկիւն փակագծերում՝ կախման կետերով (<...>):

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
ԼՈՒՍԻՆԷ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1

Քաղուածք Հայոց ազգային խորհրդի Փոքր խորհրդի նիստի արձանագրութիւնից

30 յունիսի 1918 թ.

<…> <Լսեցին>. 3. Յ. Թումանեան. Հրաժարում է Ազգ[ային] խ[որհրդ]ի լիազօրութիւնից[1]: Խնդրում է իր արած ծախսի պակասորդը լրացնել, որեւէ ուրիշ ընկերութիւնների միջոցներից:

<Որոշեցին>. Հրաժարականն ընդունել, գործը լիկվիդացիայի ենթարկել եւ <այս>պէս ներկայացնելով:

<…>

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 11, թ. 3: Բնագիր: Ձեռագիր:

2

Վրաստանի Հայոց ազգային խորհրդին

4 սեպտեմբերի 1918 թ.[2]
Թ. 40

Հայրենակցական միութիւնների միութիւնը իր սոյն թուի սեպտեմբերի 3-ի Ընդհանուր ժողովի նիստում, լսելով յայտարարութիւններ գաղթականական հարցի ներկայ դրութեան եւ նրա ցանկալի լուծման մասին, գտաւ, որ այդ խնդիրը իր վերջնական տնօրինութեան համար պահանջում է բազմակողմանի եւ մանրամասն քննութիւն, որպիսին անհրաժեշտ է կատարել ամենամոտ ապագայում եւ որ այդ՝ մեր իրականութեան ամենահրատապ ու ծանրակշիռ հարցի քննութեան ու լուծման նպատակով անհրաժեշտ է, Վրաստանի Հայոց ազգային խորհրդի, Փախստականական գլխաւոր խորհրդի ձեռներեցութեամբ, Հայրենակցական միութիւնների միութեան մասնակցութեամբ գումարել մի ընդհանուր խորհրդակցու-

թիւն՝ բաղկացած նաեւ միւս հայկական հասպատութիւնների ներկայացուցիչներից, համարելով, որ միայն այդպիսի խորհրդակցութիւնը կարող կը լինի իր կազմով ու հեղինակութեամբ բաւարար կերպով տնօրինել գաղթականութեան հարցը իր ամբողջ ծաւալով, ուստի Միութիւնների միութիւնը, դիմելով Վրաստանի Հայոց ազգային խորհրդին, խնդրում է միջոցներ ձեռք առնել ամենամոտ ապագայում գումարելու վերոյիշեալ խորհրդակցութիւնը:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան[3]

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 1 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

3

Վրաստանի Հայոց ազգային խորհրդին

13 սեպտեմբերի 1918 թ.[4]
N 41

Հայրենակցական միութիւնների միութիւնը իր սոյն թուի օգոստոսի 20-ի նիստում, քննութեան առնելով Վրաստանի Հայոց ազգային խորհրդին ներկայացուցիչների միջոցով մասնակցելու հարցը եւ նկատելով, որ Ազգային խորհուրդը, ըստ իր կազմի, հիմնականում լինելով կուսակցական սկզբունքի վրայ, միակողմանի է եւ, որպէս այդպիսին, չի համապատասխանում գաւառների ներկայացուցչութեան սկզբունքին, եւ որ այդ պակասը լրացնելու նպատակով Ազգային խորհրդի մէջ ներկայացուցիչներ պէտք է ունենայ Հայրենակցութիւնների միութիւնը, որը բաղկացած է գաւառների ներկայացուցիչներից, որոշեց. մասնակցել Վրաստանի Հայոց ազգային խորհրդին, ուղարկելով Միութիւնների միութեան կողմից ութ ներկայացուցիչներ:

Յայտնելով վերոյիշեալը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ Հայրենակցութիւնների կենտրոնական խորհուրդը պատիւ ունի խնդրելու ընդունել միութիւնների միութեան ներկայացուցչութիւնը:

Այսուհանդերձ խորհուրդս յայտնում է, որ միութեան ներկայացուցչութեան անհրաժեշտութիւնը Ազգային խորհրդում պաշտպանելու եւ այդ մասին բացատրութիւններ տալու համար լիազօրուած են խորհրդիս անդամներ Պ. Աբելեանը[5] եւ Բ. Օհանջանեանը[6]:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 2 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

4

Վրաստանի Հայոց ազգային խորհրդին

2 հոկտեմբերի 1918 թ.[7]
N 42

Խորհուրդս սոյն թուի սեպտեմբերի 4-ի N 40 գրութեամբ դիմել էր Ազգային խորհրդին եւ խնդրել գումարել ամենամօտ ապագայում գաղթականական խորհրդակցութիւն՝ կազմուած Հայոց գլխաւոր հասպատութիւնների ներկայացուցիչներից՝ քննելու համար գաղթա-

կանական խնդիրը իր ամբողջ ծաւալով: Ի պատասխան այս գրութեան՝ Ազգային խորհրդի գործադիր մարմինը յայտնել էր խորհրդիս ներկայացուցիչներին, որ գաղթականական խորհրդակցութիւնը կը գումարուի շատ շուտով եւ որ այդ խորհրդակցութեանը կը հրաւիրուին Միութիւնների միութեան ներկայացուցիչները: Սակայն մինչեւ այսօր այդ խորհրդակցութիւնը ո՛չ միայն Ազգային խորհրդի կողմից չի գումարուել, ո՛չ միմիայն այդ ուղղութեամբ քայլեր չեն արուած, այլ նոյնիսկ Միութիւնների միութեան խորհրդիս վերոյիշեալ գրութիւնը ցայսօր մնում է առանց պատասխանի եւ առանց հետեւանքի, ուստի խորհուրդս պատիւ ունի խնդրելու՝ քննել այս դէպքը, պարզել նորա պատճառները եւ հետեւանքի մասին տեղեկացնել Միութիւնների միութեանը:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 3 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

5

Վրաստանի Հայոց ազգային խորհրդին

11 հոկտեմբերի 1918 թ.
N 45

Քննելով Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի[8] կողմից գումարելիք փախստականական խորհրդակցութեան յետաձգումը, որը, ինչպէս այդ յայտարարուեց խորհրդիս նիստում, պայմանաւորուած է Փախստականական գլխաւոր խորհրդի վարիչ Յովսէփի Արղութեանի Թիֆլիսից Յալկա[9] մեկնելու հետեւանքով: Խորհուրդս իր սոյն թուի հոկտեմբերի 10-ի նիստում գտաւ, որ վերոյիշեալ խորհրդակցութիւնը, որը կոչուած է քննութեան առնելու գաղթականութեան վերաբերեալ յոյժ կարեւոր եւ միանգամայն անյետաձգելի խնդիրներ, չպէտք է յետաձգման ենթարկուի եւ ոչ մի օրով, մանաւանդ երբ յետաձգման պատճառը արտայայտում է, ինչպէս այս դէպքում, այս կամ այն անձի բացակայութեամբ:

Յայտնելով այս մասին՝ խորհուրդս խնդրում է անյապաղ գումարել վերոյիշեալ խորհրդակցութիւնը:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 4 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

6

Վրաստանի Հայոց ազգային խորհրդի գործադիր մարմնի նախագահին

1 նոյեմբերի 1918 թ.[10]
N 47

Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհրդին կից՝ Հաշտութեան համագումարին հայ ժողովրդի կողմից ներկայացուելիք յուշագիրը (memorandum) կազմելու նպատակով գումարուած յանձնաժողովը պատիւ ունի խնդրելու Ձեզ շնորհ բերել մասնակցելու

այդ յանձնաժողովի առաջիկայ նիստին, որը կ'կայանայ սոյն թուի նոյեմբերի 2-ին՝ շաբաթ օրը, երեկոյեան ժամը 7-ին պ. Յովհաննէս Թումանեանի բնակարանում (ԹՏջվպրպվրՍՈ՝ 18):

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 5: Բնագիր: Ձեռագիր:

7

Վրաստանի Հայոց ազգային խորհրդի գոր[ծադիր] մարմնի նախագահին

3 նոյեմբերի 1918 թ.[11]
N 54

Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհրդին կից՝ առաջիկայ հաշտարար վեհաժողովին հայ ժողովրդի անունից ներկայացուելիք յուշագիրը կազմելու նպատակով գումարուած յանձնաժողովը, համաձայն իր սոյն թուի նոյեմբերի 2-ի որոշման, պատիւ ունի խնդրել Ձեզ ներկայ լինել եւ մասնակցել յանձնաժողովի նիստին, որը կը կայանայ սոյն թուի նոյեմբերի 5-ին՝ երեքշաբթի, երեկոյեան ժամը 7-ին Յովհաննէս Թումանեանի բնակարանում (ԹՏջվպրպվրՍՈ՝ 18):

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 6: Բնագիր: Ձեռագիր:

8

Վրաստանի Հայոց ազգային խորհրդի գաղթականական բաժնին

24 մարտի 1919 թ.
N 96

Համաձայն Ղազախ-Շամշադինի հայրենակցական միութեան վարչութեան՝ Ղազախի հայ ազգաբնակչութիւնը չափազանց մեծ կարիք ունի հաց եւ սերմացու ստանալու համար, ըստ որում՝ այդ գաւառին ուղարկուելիք պարէնը նպատակայարմար կը լինի անցկացնել Թովուզ, Աղստաֆա եւ Այրում կայարաններով: Վերոյիշեալից զատ, ինչպէս երեւում է նոյն հայրենակցութեան մարտի 20-ի N 34 յայտարարութիւնից, վերին ասպիճանի տիտուր եւ աննախանձելի դրութեան մէջ է գտնւում Ղազախում պատսպարուած գաղթականութիւնը, որի կեանքում սննդի պակասութեան պատճառով տեղի են ունենում սովամահութեան դէպքեր, իսկ մահացութեան դէպքերը եւ ընդհանուր տոկոսը հետզհետէ աւելանում են, ուստի անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն եւ գաղթականների կազմակերպուած վերադարձը դէպի հայրենիքը:

Յայտնելով վերոյիշեալը՝ հայրենակցութիւնների կենտրոնական խորհուրդը պատիւ ունի խնդրելու Գաղթականական բաժնից՝ ձեռք առնել համապատասխան միջոցներ Ղա-

զախի հայ ազգաբնակութեանը օգնելու եւ նոյն գաւառում պատսպարուած գաղթականութեան վիճակը թեթեւացնելու համար:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 17, թ. 1 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

9
Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական միսիային Վրաստանում

28 յունիսի 1919 թ.
Թիֆլիս

Միսիայի՝ ամսիս 27-ի N 1829 գրութիւնը, որ վերաբերում է պ. Խատիսեանի N 2153 ինձ ուղղած հեռագրին, պատիւ ունեմ յայտնելու հետեւեալը:

Էդ հեռագիրը պատասխան է էն զեկուցագրի, որ ուղարկել եմ ես մեր կառավարութեանը՝ իրեն պ. նախարարապետի անունով՝ Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ յանձնաժողովի մասին եւ խնդրել եմ. 1. մի հարիւր տասը հազար ռուբլի՝ քննիչ յանձնաժողովի ծառայողների չվճարած ռոճիկները վճարելու եւ արած պարտքերը հատուցանելու առ 15 ապրիլի, 2. 50 հազար ռուբլի՝ կիսատ մնացած գործը վերջացնելու եւ 3. 50 հազար ռուբլի՝ յանձնաժողովի Ղարաբաղի ճիւղին ուղարկելու: Ընդամենը՝ երկու հարիւր տասը հազար ռուբլի:

Քննիչ յանձն[աժողովի] նախագահ՝ Յովհ. Թումանեան

ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 202, թ. 33: Ինքնագիր:

10
Անցագրերի բյուրոյին

16 ապրիլի 1921 թ.
N 1017

Խնդրում եմ Ձեզ սոյնը հանձնողի հետ Արտաքին գործերի կոմիսարիատ ուղարկել Թիֆլիս ուղեւորուելու անցագիր Յովհաննէս Թումանեանի, դստեր՝ Աշխեն Խատիսեանի եւ թոռան՝ Հովիկ Խատիսեանի անուամբ:

Արտգործժողկոմ՝ [Ա.] Մռաւեան
Քաղտուղարի փոխարեն՝ [Մ.] Խոջամիրեան[12]

ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 18, թ. 195: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

11
Անցագիր

18 ապրիլի 1921թ.
N 1034

Սոյն անցագիրը տրւում է Յովհաննէս Թումանեանին առ այն, որ նրան դստեր՝ Ա. Խաչիսեանի եւ թոռան՝ Հովիկ Խաչիսեանի հետ թոյլատրւում է մեկնել Թիֆլիս:

Սոյնը վավերացվում է ստորագրութեամբ եւ կնիքով:

Արտգործժողկոմ՝ [Ա.Մռաւեան]
Քարտուղարի փոխարէն՝ ՝ [Մ. Խոջամիրեան]

ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 18, թ. 205: Պատճէն: Մեքենագիր: Թարգմանութիւն ռուսերէնից:

12
Յարգելի ընկեր Աս. Մռաւեան

28 մարտի 1923 թ.
Բեռլին

Տարաբախտ հօրս մահը Մոսկայում ս. թ. մարտի 23-ին էնքան անսպասելի էր եւ դաժան, որ ես չհասայ նրան, գէթ մահից առաջ մի երկու խօսք ասելու եւ լսելու: Այժմ Բեռլին եմ եւ կշռելով հանգամանքները, որոնք շատ են ծանր եւ պատասխանատու հանդէպ իմ ընտանիքի, ես ստիպւած եմ վերադառնալ Փարիզ՝ աւարտելու Սորբոնը, որ դեռ մի տարի ունեմ: Էդ է եղած եւ հօրս վերջին ցանկութիւններից մէկը. դժւար է շեղւել սիրելի հայրիկիս պատւէրից, սակայն եթէ սովետ[ական] իշխանութիւնը ինձ կպահանջի ներկայանալ՝ ես անմիջապէս կդառնամ Թիֆլիս, Երեւան, մանաւանդ որ երբէք քաղաքականութեամբ չեմ զբաղւել, ո՛չ մի կուսակցութեան չեմ պատկանած եւ, փառք Աստուծոյ, Թիֆլիսից մեկնել եմ սովետ[ական] իշխ[անութեան] գիտութեամբ եւ թոյլտւութեամբ: Սիրելի ընկ. Մռաւեան, ես գիտեմ էն բուռն յարգանքն ու սէրը, որ տածում էր սով[ետական] իշխ[անութիւնը] դէպի յանգուցեալ հայրիկս եւ էդ պատճառով վստահ եմ, որ աչքաթող չէք անի մեծ բանաստեղծի անօգնական ընտանիքը վշտի էս դժբախտ օրերին: Բացի էդ, խնդրում եմ Ձեզ, յանուն հայ գրականութեան եւ պատմութեան, կարգադրէք, որ ո՛չ ոք իրեն իրաւունք չհամարի խառնել եւ քրքրել հօրս ձեռագրերն ու թղթերը: Ես գտնում եմ յարմար, որ լաւ կ'լինէր կնքւէին նրա գրասեղանն ու բիւրո-պահարանը՝ մինչեւ նոր կարգադրութիւն, կամ իմ վերադարձը: Լինելով գրականութեան ուսանող՝ ես մօտ եմ կանգնած հօրս գործերին (բայց ո՛չ տաղանդին) եւ կարող եմ մեծ խնամքով ու զգուշութեամբ կարգի բերել բոլոր գործերն ու թղթերը:

Եղբայրս՝ Արեգը, էդտեղ է, նա երեւի ձեզ հետ կտեսնւի եւ կանէք յարմարագոյնը ձեռագիրներն ու գործերը անվնաս եւ խնամքով պահելու համար:

Հաճեցէք, սիրելի ընկեր, երկտողով պատասխանել իմ էս գրութեանն ու նախկին խնդրիս Բեռլին՝ ընկ. Սիմ. Փիրումեանի միջոցով:

Իմ հասցէս. H. Toumanean, 3, Rue Casimir Delavigne Paris, 6 (France).

Սրտագին բարեւներով՝ Ձեր
վշտահար Վամիկ] Թումանեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 2ա, գ. 1, թ. 30ա եւ շրջ.: Ինքնագիր:

13

Անդրկովկասեան Հանրապետութիւնների ընկ. ներկայացուցչին

29 մարտի 1923թ.
Բեռլին

Հօրս՝ բանաստեղծ Յովհ. Թումանեանի տարաբախտ մահից յետոյ մնում է մի մեծ ընտանիք, որը ո՛չ մի զումարի հասոյթ չունի: Ես շատ լաւ գիտեմ մեր սովետ[ական] իշխանութեան միանգամայն ազնիւ վերաբերմունքն ու յարգանքը դէպի իմ յանգուցեալ հայրը, էդ պատճառով էլ համոզուած եմ, որ Հայաստանի իշխանութիւնը աչքաթող չի անի հօրս որբացած ընտանիքը:

Միւս կողմից ես եմ էն աւագ որդին, որ կարիք ունեմ օր առաջ աւարտելու կիսատ ուսումս եւ վերադառնալու՝ հայրիկիս օջախը կանգուն պահելու եւ ուժերս իմ ժողովրդին տրամադրելու համար: Յայտարարելով ինձ Հ[այաստանի] սով[ետական] իշխանութեան լիակատար տրամադրութեան տակ եւ նոյնիսկ Ձեր, պատրաստ լինելով մեկնելու Հայաստան համաձայն Ձեր առաջին հրահանգի՝ ես խնդրում եմ, յարգելի ընկեր, հայթայթել ինձ համար որեւէ օժանդակութիւն, թէկուզ եւ պետական նպաստ՝ հնարաւորութիւն տալով ինձ 2 սեմեստր անցնելու Սորբոնում եւ աւարտական քննութիւն տալու եկող փետրուարին կամ թերեւս սոյն նոյեմբերին: Խոստանում եմ աւարտելուց անմիջապէս մեկնել Փարիզից Հայաստան՝ իմ համախոհ մի քանի ընկերների հետ միասին:

Անցեալ տարին տաժանելի պայմաններում անց կացրի. հայրս տառապում էր անկողնում, եւ՝ ես Փարիզում միանգամայն զուրկ որեւէ օժանդակութիւնից:

Այժմ, աւելի քան երբեւէ, իմ միակ յոյսն ու աղբիւրը, որին կարող եմ դիմել եւ արդիւնքի սպասել, դա մեր ներկայ իշխանութիւնն է, որի օժանդակութիւնն եմ խնդրում՝ մի տարով ինձ ապահովել Փարիզում ուսումն աւարտելու համար: Մասնագիտութիւնս է գրականութիւն–փիլիսոփայութիւն:

Հաճեցէք, յարգելի ընկեր, Ձեր արած կարգադրութեան եւ դիմումի մասին իրազեկ անել ինձ:

Հասցէս: H. Toumanean, 3, Rue Casimir Delavigne Paris, 6 (Frankreich).

Սորբոնի գրական բաժնի ուսանող՝ Համլիկ Թումանեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 2ա, գ. 1 թ. 30 եւ շրջ.: Ինքնագիր:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 1918 թ. փետրուարին Յ. Թումանեանը Հայոց ազգային խորհրդի կողմից նշանակուել էր Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի եւ Բորչալուի ընդհանուր լիազօր:

2 Փաստաթուղթը Վրաստանի Հայոց ազգային խորհրդում ստացուել է 1918 թ. սեպտեմբերի 5-ին:

3 Համազասպ Համբարձումեան (1880-1965 թթ.) - Նոր Բայազետի հայրենակցական միութեան ներկայացուցիչ: Բանաստեղծ, մասնագիտութեամբ՝ բանասէր: ՀԽՍՀ գիտութեան վաստակաւոր գործիչ: Հայ ականաւոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումեանի հայրը:

4 Փաստաթուղթը Վրաստանի Հայոց ազգային խորհրդում ստացուել է 1918 թ. սեպտեմբերի 13-ին:

5 Պօղոս Աբելեան(1877-1943 թթ.) –Ախալքալակի հայրենակցական միութեան ներկայացուցիչ: Հայ ազատագրական շարժման գործիչ, իրաւաբան, տնտեսագէտ, գրող:

6 Բ. Օհանջանեան – Ախալքալակի հայրենակցական միութեան ներկայացուցիչ:

7 Փաստաթուղթը Վրաստանի Հայոց ազգային խորհրդում ստացուել է 1918 թ. հոկտեմբերի 2-ին:

8 Վրաստանում ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչը յայտնի դաշնակցական գործիչ Արշակ Ջամալեանն էր:

9 Այսինքն՝ Ծալկա:

10 Փաստաթուղթը Վրաստանի Հայոց ազգային խորհրդում ստացուել է 1918 թ. նոյեմբերի 1-ին:

11 Փաստաթուղթը Վրաստանի Հայոց ազգային խորհրդում ստացուել է 1918 թ. նոյեմբերի 4-ին:

12 Միհրան Խոջամիրեան(1882-1938 թթ.) – 1920 թ. վերջին եւ 1921 թ. սկզբին կատարել է ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի քարտուղարի պարտականութիւնները: